ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՍԻԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 9 ապրիլի 2024 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ե. Խունդկարյանի, Հ. Հովակիմյանի, Է. Շաթիրյանի, Ս. Սաֆարյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ՝ Ռ. Գևորգյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2024 թվականի 25 հունվարի N 101-Ա որոշմամբ հավանություն է տվել «2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է նշված համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2024 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, հետազոտելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի հունիսի 29-ին՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Պեկին քաղաքում:

Համաձայնագրով հիմնադրվող Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի (այսուհետ՝ Բանկ) նպատակն է խթանել կայուն տնտեսական զարգացումը, ստեղծել նյութական արժեք և բարելավել Ասիայում ենթակառուցվածքների փոխկապակցվածությունը՝ ներդրումներ կատարելով ենթակառուցվածքներում և այլ ճյուղերում, խթանել տարածաշրջանային համագործակցությունը և գործընկերությունը զարգացման մարտահրավերներին դիմակայելու հարցում՝ սերտորեն համագործակցելով զարգացման բազմակողմանի և երկկողմանի այլ հաստատությունների հետ (հոդված 1):

Հայաստանի Հանրապետությունը Համաձայնագիրը վավերացնում է պայմանով, որ իրեն իրավունք է վերապահում Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին վճարվող աշխատավարձից և պարգևատրումներից ստաց-

վող եկամուտները հարկելու՝ հիմք ընդունելով Համաձայնագրի 51-րդ հոդվածը (Հավելված ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 25-ի N 101-Ա որոշման):

Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից, 60 հոդվածից, և հավելվածներից, մասնավորապես՝ Հավելված Ա. «Հայտարարված կանոնադրական կապիտալում նախնական բաժանորդագրություններն այն երկրների համար, որոնք կարող են անդամ դառնալ՝ 58-րդ հոդվածին համապատասխան» և Հավելված Բ. «Տնօրենների ընտրությունը»:

Համաձայնագրում ամրագրված են Բանկի ստեղծման նպատակի, անդամակցության ընթացակարգի, կապիտալին բաժանորդագրման, անդամավճարի փոխանցման կարգի, Բանկի գործառնությունների ու կառավարման, կարգավիճակի, անձեռնմխելիության, արտոնությունների տրամադրման և այլ դրույթներ:

Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը կազմում է հարյուր միլիարդ ամերիկյան դոլար ($100.000.000.000)՝ բաժանված յուրաքանչյուրը 100.000 հազար դոլար ($100.000) անվանական արժեքով մեկ միլիոն (1.000.000) բաժնետոմսերի, որոնք հասանելի են միայն անդամների կողմից բաժանորդագրման համար (հոդված 4):

Բանկին անդամակցության գործընթացը նախատեսում է բաժանորդագրում Բանկի բաժնետիրական կապիտալի բաժնեմասերին՝ վճարվող և ցպահանջ բաժնեմասերի միջոցով: Մեկ բաժնեմասի արժեքը 100 հազ. ԱՄՆ դոլար է:

Ըստ Համաձայնագրի՝ Բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը առաջարկվող 374 բաժնեմասին բաժանորդագրվելու դեպքում բաժանորդագրության ընդհանուր գումարը կկազմի 37,400,000.0 ԱՄՆ դոլար:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում, երբ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում առնվազն տասը ստորագրող կողմերի, որոնց նախնական բաժանորդագրությունները, ինչպես սահմանված է Համաձայնագրի Ա հավելվածում, ընդհանուր առմամբ կազմում են ոչ պակաս, քան այդպիսի բաժանորդագրությունների ընդհանուրի հիսուն տոկոսը:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

2.1. բաժանորդագրվել՝ Բանկի կանոնադրական կապիտալի բաժնետոմսերին (հոդված 5, պարբերություն 1),

2.2. որպես Համաձայնագրի ստորագրող կողմ՝ Բանկի վճարված կապիտալի համար 58-րդ հոդվածին համապատասխան անդամ դարձող, ի սկզբանե բաժանորդագրությամբ նախատեսված գումարի վճարումը կատարել Համաձայնագրի 6-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ սահմանված կարգով (հոդված 6, պարբերություն 1),

2.3. երաշխավորել, որ կապիտալի բաժնետոմսերը չեն ենթարկվի գրավադրման կամ ցանկացած եղանակով ծանրաբեռնման (հոդված 7, պարբերություն 2),

2.4. երաշխավորել, որ որևէ սահմանափակում չի դրվի արժույթների վրա, ի թիվս այլնի, ցանկացած երկրում վճարում կատարելու համար Բանկի կամ Բանկի ցանկացած շահառուի կողմից այն ստանալու, պահելու, օգտագործելու կամ փոխանցելու կապակցությամբ (հոդված 19, պարբերություն 1),

2.5. նշանակել մեկ կառավարիչ և կառավարչի մեկ տեղակալ՝ որպես անդամ Կառավարիչների խորհրդում (հոդված 22, պարբերություն 1), ինչպես նաև համապատասխան պաշտոնական մարմին, որի հետ Բանկը կարող է կապ հաստատել Համաձայնագրի շրջանակներում ծագող ցանկացած հարցի առնչությամբ (հոդված 33, պարբերություն 1),

2.6. նշանակել Հայաստանի Հանրաետության կենտրոնական բանկին կամ Բանկի հետ համաձայնեցված այդպիսի այլ հաստատություն՝ որպես դեպոզիտարիա, որտեղ Բանկը կարող է պահել Հայաստանի Հանրապետության արժութային ռեզերվները, ինչպես նաև Բանկի այլ ակտիվներ (հոդված 33, պարբերություն 2),

2.7. ապահովել Բանկին այնպիսի տեղեկություններով, որոնք այն կարող է խելամտության սահմաններում պահանջել Հայաստանի Հանրապետությունից իր

գործառույթների իրականացումը խթանելու նպատակով (հոդված 34, պարբերություն 2),

2.8. ձեռնարկել անհապաղ անհրաժեշտ միջոցներ Համաձայնագրի IX գլխում ներկայացված դրույթներն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դնելու նպատակով և Բանկին տեղեկացնել ձեռնարկած գործողությունների մասին (հոդված 44, պարբերություն 2),

2.9. երաշխավորել Բանկի անձեռնմխելիությունը ցանկացած տեսակի իրավական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ փոխառությունների միջոցով կամ այլ եղանակով ֆինանսական միջոցներ ներգրավելու, պարտավորությունները երաշխավորելու կամ արժեթղթեր վաճառելու ու գնելու կամ դրանց անդերռայթինգ իրականացնելու հետ կապված իր լիազորություններից բխող կամ դրանց առնչվող դեպքերի (հոդված 46, պարբերություն 1),

2.10. երաշխավորել՝ չհակասելով Համաձայնագրի 46-րդ հոդվածի 1-ին պարբերության դրույթներին, որ ընդդեմ Բանկի հայց չի ներկայացվի Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության որևէ գործակալության կամ հաստատության, կամ ցանկացած սուբյեկտի կամ անձի կողմից, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործում է կամ պահանջներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կամ Հայաստանի Հանրապետության որևէ գործակալության կամ հաստատության անունից. Բանկի և դրա անդամների միջև վեճերի լուծման համար օգտվել Համաձայնագրում, Բանկի ներքին իրավական ակտերում և կանոնակարգերում կամ Բանկի հետ կնքված պայմանագրերում սահմանված հատուկ ընթացակարգերից (հոդված 46, պարբերություն 2),

2.11. երաշխավորել, որ Բանկի գույքն ու ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, անձեռնմխելի են առգրավման, արգելադրման կամ կատարման բոլոր ձևերի նկատմամբ՝ նախքան Բանկի դեմ վերջնական դատական ակտ կայացվելը (հոդված 46, պարբերություն 3),

2.12. երաշխավորել, որ Բանկի գույքն ու ակտիվները՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, անձեռնմխելի են խուզարկության, ռեկվիզիցիայի, բռնագանձման, էքսպրոպրիացիայի կամ կատարողական կամ օրենսդրական գործողությունների միջոցով վերցնելու կամ բռնագանձման ցանկացած այլ ձևի նկատմամբ (հոդված 47, պարբերություն 1),

2.13. երաշխավորել, որ Բանկի արխիվները և, առհասարակ, դրան պատկանող կամ դրանում պահվող բոլոր փաստաթղթերն անձեռնմխելի են՝ անկախ դրանց գտնվելու վայրից և այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում (հոդված 47, պարբերություն 2),

2.14. երաշխավորել, որ Բանկի ամբողջ գույքն ու ակտիվները զերծ կլինեն ամեն տեսակի սահմանափակումներից, կարգավորումներից, հսկողությունից և մորատորիումից այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Բանկի նպատակներին հասնելու և գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար, ինչպես նաև հաշվի առնելով Համաձայնագրի դրույթները (հոդված 48),

2.15. երաշխավորել Բանկի բոլոր կառավարիչների, տնօրենների, նրանց տեղակալների, Նախագահի, փոխնախագահների և մյուս պաշտոնատար անձանց ու աշխատողների, այդ թվում՝ Բանկի համար հանձնարարություններ կատարող կամ ծառայություններ մատուցող փորձագետների ու խորհրդատուների՝ անձեռնմխելիությունը ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրականացված գործողությունների հետ կապված դատական գործընթացների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը հրաժարվում է անձեռնմխելիությունից, ինչպես նաև երաշխավորել բոլոր պաշտոնական փաստաթղթերի և արձանագրությունների անձեռնմխելիությունը (հոդված 50, ենթապարբերություն i),

2.16. երաշխավորել, որ Համաձայնագրի 50-րդ հոդվածում նշված անձինք, եթե նրանք Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեն, ապա նրանց կտրամադրվի ներգաղթի սահմանափակումների, օտարերկրացիների գրանցման վերաբերյալ պահանջների ու պետական ծառայության հետ կապված պարտավորություն-

ների մասով այն նույն անձեռնմխելիությունը, ինչպես նաև տարադրամի փոխանակման հետ կապված կանոնակարգերի մասով այն նույն հնարավորությունները, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվում են մյուս անդամների համանման կարգի ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց և աշխատողներին, ինչպես նաև ճամփորդելու հետ կապված հնարավորությունների առումով նրանց կտրամադրվի այն նույն պայմանները, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից տրամադրվում են մյուս անդամների համանման կարգի ներկայացուցիչներին, պաշտոնատար անձանց և աշխատողներին (հոդված 50, ենթապարբերություններ ii, iii),

2.17. ազատել Բանկին, դրա ակտիվները, գույքը, եկամուտը և Համաձայնագրի համաձայն դրա գործառնություններն ու գործարքները բոլոր տեսակի հարկերից և բոլոր տեսակի մաքսատուրքերից, ինչպես նաև ազատել Բանկին ցանկացած հարկի կամ տուրքի վճարման, պահման կամ հավաքման պարտավորությունից (հոդված 51, պարբերություն 1),

2.18. երաշխավորել, որ որևէ տեսակի հարկ չի գանձվի Բանկի կողմից Բանկի տնօրեններին, փոխտնօրեններին, Նախագահին, փոխնախագահներին և մյուս պաշտոնատար անձանց կամ աշխատողներին, այդ թվում՝ Բանկի համար հանձնարարություններ կատարող կամ ծառայություններ մատուցող փորձագետներին ու խորհրդատուներին որոշակի հանգամանքներում վճարվող աշխատավարձից, պարգևատրումներից և ծախսերից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությունը վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու մասին փաստաթղթի հետ մեկտեղ ի պահ կհանձնի հայտարարություն այն մասին, որ Հայաստանի Հանրապետության իրեն և իր քաղաքական ստորաբաժանումներին վերապահում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Բանկի կողմից որոշակի հանգամանքներում վճարվող աշխատավարձից և պարգևատրումներից հարկեր գանձելու իրավունք (հոդված 51, պարբերություն 2),

2.19. երաշխավորել, որ Բանկի կողմից թողարկված որևէ պարտատոմս կամ արժեթուղթ, այդ թվում՝ դրանցից ստացված ցանկացած շահութաբաժին կամ տոկոսագումար՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, չի հարկվի որևէ տեսակի այնպիսի հարկով՝ որով խտրականություն կդրվի այդ պարտատոմսի կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ այն թողարկվել է Բանկի կողմից, կամ, եթե այդպիսի հարկման համար միակ իրավաբանական հիմքը դրա թողարկման վայրն է կամ այն արժույթը, որով այն թողարկվել է և ենթակա է վճարման կամ վճարվում է, կամ էլ Բանկին պատկանող որևէ գրասենյակի գտնվելու վայրը կամ գործունեության իրականացման վայրը (հոդված 51, պարբերություն 3),

2.20. երաշխավորել, որ Բանկի կողմից երաշխավորված որևէ պարտատոմս կամ արժեթուղթ, այդ թվում՝ դրանցից ստացված ցանկացած շահութաբաժին կամ տոկոսագումար՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանք տիրապետում, չի հարկվի որևէ տեսակի այնպիսի հարկով, որով խտրականություն կդրվի այդ պարտատոմսի կամ արժեթղթի նկատմամբ միայն այն պատճառով, որ այն երաշխավորվել է Բանկի կողմից, կամ, եթե այդպիսի հարկման համար միակ իրավաբանական հիմքը Բանկին պատկանող որևէ գրասենյակի գտնվելու վայրը կամ գործունեության իրականացման վայրն է (հոդված 51, պարբերություն 4):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակին՝ Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն ընձեռելով մասնակցելու տարածաշրջանային խոշոր ներդրումային ծրագրերին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2015 թվականի հունիսի 29-ին ստորագրված «Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Ա.ԴԻԼԱՆՅԱՆ**

9 ապրիլի 2024 թվականի
ՍԴՈ-1722